



« 30 » 10 2009թ

# ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ - 105

Տրված է՝

«Դինո Գոլդ Մայնինգ Բանկին» ՓԲԸ  
ք. Կապան, Գործարանային 4

Գործունեությունը՝

Կապանի պղինձ-կոլչեդանային հանքավայրի «Կենտրոնական»  
հանքի կոնսերվացման աշխատանքային նախագծի վերաբերյալ  
ՀՀ Սյունիքի մարզ

Տնօրեն՝



Ա. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 2 էջ:

**ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 105

«30» 10 2009թ.



**«Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ կողմից ներկայացված Կապանի պղինձ-կոլչեդանային հանքավայրի «Կենտրոնական» հանքի կոնսերվացման աշխատանքային նախագծի վերաբերյալ**

Պատվիրատու՝ «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ  
Նախագծող՝ «Ռակե» ՍՊԸ  
Լիազորված անձ՝ Վ. Համբարձումյան  
Ներկայացված նյութ՝ Աշխատանքային նախագիծ  
Տեղադրման վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ

Կենտրոնական հանքավայրը իրենից ներկայացնում է փակ հանք, որը գտնվում է Կապան քաղաքի հյուսիսային մասում 3.5կմ հեռավորության վրա:

Հանքավայրի տարածքով է հոսում Ողջի գետի Կավարտ ջուր վտակը:

Համաձայն ՀԱ-Լ 14/292 լիցենզիայի տրված 28.10.2004թ, սկսվեց փակ հանքի շահագործումը «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ կողմից, իսկ 2008թ օգոստոսի 16-ին՝ համաձայն տեխնիկական վերահսկողության բաժնի տվյալների հանքավայրի աշխատանքները դադարեցվել են:

Ներկա պահին հանքարդյունահանման աշխատանքներ չեն տարվում, տարվում է հանքավայրի տարածքի և սարքավորումների վրա հսկողություն:

Կլիման այստեղ չափավոր շոգ է: Գարունը ուղեկցվում է խոնավ եղանակով, որը պայմանավորված է ձնհալով, և որ ավելի շատ է քան տեղումները:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է + 11.9<sup>0</sup>C:

Կենտրոնական հանքավայրը սնվում է խմելու և ոռոգման ջրերից: Խմելու ջուրը վերցվում է «Հաջրմուղկոյուղի» ՓԲԸ «Կապանի մասնաճյուղից»: Ոռոգման ջուրը հանքավայրը ստանում է «Ղափան» ԶՕԸ-ից, որը հիմնականում օգտագործվում էրկոմպրեսորների հովասման և հորատման աշխատանքների ժամանակ:

Հանքավայրը չշահագործելու պահից ջրամատակարարումը դադարեցվել է:

Արտադրական օբեկտ հանդիսացող կենտրոնական հանքի կոնսերվացման հնարավոր հետևանքները մթնոլորտային օդի վրա չկան՝ մինչև տարածքում աշխատանքների վերսկսումը, քանի որ դադարեցվել են բոլոր տիպի աշխատանքները և վերացել են արտանետման աղբյուրները: Պայթեցման աշխատանքների դադարեցման հետ դադարում է նաև գազային խառնուրդների արտանետումը:

Մյուս ծառայությունների և տրանսպորտային միջոցների արտանետում բացառվում է: Լեռնային ապարները գազաբերություն չեն պարունակում և հակված չեն ինքնաբռնկման:

Համաձայն ՀՀ կառավարության 2005թ մարտի 31-ի N 485-Ն որոշման՝

Կոնսերվացման համար նախատեսված է.

1. «Չոր» տարբերակը,

4. Որոշ հանքուղիների, բովանգքերի և խաչմերուկների ամրակապում կամ ամրակապերի վերականգնում:

Բացի սրանից նախատեսվում է.

1. Փակել «Կենտրոնական» հանքին վերաբերվող հանքուղիների մուտքերը /հանքուղի N2, N3 և N9 օդափոխման/, հաշվի առնելով նրանցում առկա ջրհեռացման առուները և նեղգիծ երկաթուղին:
2. Փակել «Կենտրոնական» հանքը հանքավայրի մյուս հանքերին կապող փորվածքները:
3. Փակել «Կենտրոնական» հանքը հանքավայրը, փակել սրան սպասարկող վերամբարձ մեքենայի շենքը:
4. Հոսանքազրկել «Կենտրոնական» հանքավայր սպասարկող վերամբարձ մեքենայի շենքը, «Կենտրոնական» հանքը սնող ենթակայանը և հանձնել տեղական էներգացանցի սպասարկմանը:
5. Կտրել «Կենտրոնական» հանքը սնող սեղմած օդի խողովակաշարը N2 հանքուղու մուտքի մոտ և խլափակել:
6. Բոլոր փակված՝ կոնսերվացված կառույցներում թողնել դռներ՝ համայցներ իրականացնելու համար:

Մնացորդային պաշարները ըստ հանքային մարմինների ֆիքսել:

Նախագծում համառոտ արտացոլվում է բետոնյա դռների ձևի և չափի, իրնչպես նաև տեղադրման եղանակները:

Նախատեսված է բոլոր երեք հանքուղիների մուտքերի մոտ 3մ հեռավորության վրա կանգնեցնել պողպատե ձողերով պարիսպ 2.5մ բարձրությամբ, հանքուղիների մուտքերի դիմաց ունենալով դուռ կամ դարպաս:

Դռները կամ դարպասը կլինեն արտաշարժ: Պարիսպը կառուցվելու է տեղանքի համապատասխան:

«Կենտրոնական» հանքի կոնսերվացումը իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության N 485-Ն որոշման, ինչպես նաև գործող նորմատիվներին համապատասխան:

#### Փորձաքննական պահանջներ

1. Քանի որ Կոնսերվացվում է միայն Կենտրոնական հանքը, ուստի ռեկուլտիվացիայի հետ կապված աշխատանքները իրականացնել բացահանքի շահագործումը ավարտելուց հետո:
2. Հանքի Կոնսերվացումից հետո կեղտաջրերի մոնիտորինգը և մաքրումը իրականացնել համաձայն լիազոր մարմնին ընդունման և հանձնման արձանագրության:

#### Եզրակացություն

«Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ կողմից ներկայացված Կապանի պղինձ-կոլչեղանային հանքավայրի «Կենտրոնական» հանքի կոնսերվացման աշխատանքային նախագծի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝

Փորձագետ՝



Հ. Գրիգորյան

Հ. Ավետիսյան